

էր երկու աշակերտներուն: Ստոյգ է որ թուանշան մը գծուարութիւն բերած է. բայց այդպիսի պարագայի մը տակ թուանշանի մը այդքան հեղինակութիւն կըրնա՞յ տրուիլ: Ընդօրինակողները այդքան փութաջա՞ն են:

Խառնաշփոթութիւնը հարկադրանք մը եղած էր, ո՞ճ մըն էր ան. ո՞վ կրնար բողոքել, երբ Որոգինէսի պէս, քննադատ մը վճիռ տուած էր: Ոչ ոք կը բողոքէր Պաղեստինի մէջ. Եմմաուուս գիւղը գուցէ գոյութենէ դադրած էր, բայց ամբողջ աշխարհ այս բաներէն տեղեկութիւն չունենալով՝ կը շարունակէր ընդօրինակել «Եմմաուուս հեռու էր վաթսուն ասպարէզ»:

Եզրակացնենք.

ա) Վաթսուն ընթերցուածքը բնագրական քննադատութեան կանոններուն համաձայն պէտք է պահել:

բ) Հարիւր վաթսուն ընթերցուածքը հաւանաբար գիտական ուղղագրութիւն մըն է, որ կը վերաբերի Որոգինէսի, եւ ներշնչուած Եմմաուուս-Նիկոպոլիսի տեղական աւանդութեամբ:

գ) Ամուսսի աւանդութիւնը կրկին է: Հրաշալի ջրհորին հին և վաւերական աւանդութիւնը պէտք է պահել, բայց յարուցեալ Փրկչին երեւման աւանդութիւնը չի կրնար յաղթող հանդիսանալ ընդդէմ վաւերական ստուգութեան այն ձեռագիրներու և թարգմանութեանց որ կը վկայեն ի նպաստ աւելի հին աւանդութեան մը կամ մանաւանդ ժամանակակից իւրողութեանց» (R. Bl. 1896, էջ 88-92):

5. Լաբրուն, Պէյք-ձեմալ, Ռեմլի, Լիւդ, Յոպպե. — Հաւանաբար արամական ծագումով անուն մը, նաբրուն որ կը նշանակէ դիտարան: